ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջրարբի ,

N 82
10 օգոստոս 2016թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիս ամսվա ընդունած որոշումները:

Միաժամանակ հայտնում ենք, որ համայնքի ղեկավարի կողմից հուլիս ամսվա ընթացքում կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյան

Կատ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2016թվականի N 19-Ն

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ և 78-րդ հոդվածների դրույթներով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ինմասի 2-րդկետով, ՀՀկառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 2-ի N 36-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2016 թվականի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 10 00 -ին, Ջրարբիի համայնքապետարանի շենքում անցկացնել մրցույթ ՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերը 12 տարով վարձակալության տրամադրելու համար:
2.Հողամասի վարձակալության իրավունքի տրամադրումը իրականացնել մրցույթով:
3.Լոտ 1 ծածկագիր 04-086-0101-0074, 1.2432 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող, մերձարաքսյան գոտում , մեկնարկային գինը՝18000 /տասնութ հազար/ՀՀ դրամ:
4.Լոտ 2 ծածկագիր 04-086-0101-0075, 1.1517 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք , մեկնարկային գինը՝17000 / տասնյոթ հազար/ ՀՀ դրամ:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2016 թվականի օգոստոսի 2
գ.Ջրարբի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիս 2016թվականի N 18-Ա

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին 8-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի սեպտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքում համայնքի ավագանու հերթական ընտրություն անցկացնելու համար քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) համայնքի Պ.Սևակ փողոց 5 հասցեում գտնվող Մշակույթի տան դիմացի պատից 60 քառակուսի մետր մակերես.

2) համայնքի Հ.Թումանյան փողոց 14/ 1 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի պատից 50 քառակուսի մետր մակերես:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

20 16 թվականի հուլիսի 25
գ.Ջրարբի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիս 2016թվականի N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի սեպտեմբերի 18-ին կայանալիք համայնքի ավագանու հերթական ընտրություն անցկացնելու համար տեղամասային կենտրոն սահմանել Ջրարբի համայնքի Մշակույթի տունը, որը գտնվում է Պ.Սևակ փողոց 5 հասցեում:

2. Տեղամասային կենտրոնի տարածքի տիրապետող նշանակել <<Ջրարբիի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Արփինե Խաչատրյանին:

3.Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:

4 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

20 16 թվականի հուլիսի 25
գ.Ջրարբի